ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անուանի ազգային-քաղաքական եւ կուսակցական-պետական գործիչ՝ Յովհաննէս Քաջազնունին յայտնի է որպէս 1918-1920 թուականների Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ, Բաքուի հայկական սբ. Թադեւոս-Բարդուղիմէոս մայր տաճարի ճարտարապետ եւ «Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» հանրայայտ գրքի հեղինակ, իսկ ժամանակակից պատմագրութեան մէջ շատ աղօտ եւ ոչ յստակ տեղեկութիւններ կան Քաջազնունու՝ Խորհրդային Հայաստանում ապրած տարիների մասին, եւ քչերին է յայտնի, թէ ինչ ճակատագրի արժանացաւ հայրենիք վերադառնալուց յետոյ։ Ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում նրա կեանքի՝ Խորհրդային Հայաստանում ապրած տարիների չլուսաբանուած էջերը։

1923ի Ապրիլի 7ից մինչեւ Մայիսի 19ը Վիեննայի մէջ գումարւում է Հ.Յ.Դ. Արտասահմանեան մարմինների արտակարգ խորհրդաժողովը[1]*։ Խորհրդաժողովին հրաւիրւում է եւ Յովհաննէս Քաջազնունին, որ Սիմոն Վրացեանի եւ Ռուբէնի (Ռուբէն Տէր-Մինասեան) հետ միասին պէտք է հանդէս գար զեկուցմամբ, սակայն վերջին պահին հրաժարւում է մասնակցելուց եւ Վիեննա մեկնելուց։ Խորհրդաժողովին՝ նա կնքուած ծրարով ուղարկում է իր պատրաստած զեկուցումը, որ վերնագրուած էր «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի» եւ հանգամանօրէն փորձում է բացատրել կուսակցական ընկերներին, որ Խորհրդային Հայաստանի նկատմամբ Հ.Յ.Դ. կուսակցութեան վարած քաղաքականութիւնը անարդիւնաւէտ է, եւ պատմական տուեալ ժամանակաշրջանում Հ.Յ.Դ.-ն անելիք չունի Հայաստանում։ Նա կոչ էր անում դադարեցնել պայքարը եւ համախմբուել Խորհրդային Հայաստանի շուրջ՝ միաժամանակ զարգացնելով այն միտքը, թէ Հ.Յ.Դ.-ն պէտք է ինքնալուծարուի։ Յովհաննէս Քաջազնունու զեկուցում-առաջարկն ընթերցւում է խորհրդաժողովում, բայց չի քննարկւում, այլ մերժւում է միաձայն։ Ինչպէս նշում է Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Արշակ Ջամալեանը, խորհրդաժողովի անդամները, անլուրջ մի բան համարելով, մինչեւ անգամ աւելորդ նկատեցին նրա քննութիւնը ըստ էութեան*[2]*։ 1923ի Յուլիսին Քաջազնունին իր զեկուցումը կուսակցական շարքային ընկերներին աւելի մատչելի դարձնելու նպատակով, հրապարակում է առանձին գրքոյկով, որ մեծ աղմուկ է բարձրացնում թէ՛ Հ.Յ.Դ. կուսակցութեան մէջ եւ թէ՛ սփիւռքի գաղութներում։ Նոյն թուի Օգոստոսի 15ին Քաջազնունին նամակ է գրում Կարպատների մեկուսի կոմիտէին (Հ.Յ.Դ. կուսակցութեան այն շրջանի ղեկավարութեանը, որի մէջ գտնւում էր ինքը), որով յայտնում է, որ դուրս է գալիս կուսակցութեան շարքերից*[3]*, իսկ 1924ի Մարտի 15ին դիմում է Պեռլինի Խորհրդային իշխանութեան Անդրկովկասեան Խորհրդային Հանրապետութիւնների առեւտրական ներկայացուցչին՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու թոյլատրութիւն խնդրելով*[4]*։*

1924ի Սեպտեմբերի 25ին Անդրերկրկոմի խնդրանքով եւ Ալեքսանտր Մեասնիկեանի զեկուցումով Համկ(բ)Կ կենտկոմի քաղբիւրոն վերադարձի թոյլտուութիւն է տալիս Յովհ. Քաջազնունուն[5]*։ 1924 Նոյեմբերին նա փորձում է Կոստանցիա նաւահանգստից վերադառնալ Բաթում, սակայն նաւ չլինելու պատճառով անցնում է Աթէնք։ Այնտեղ նա մնում է մօտ մէկ շաբաթ եւ*

---

1 *Քաղուածքներ Հ.Յ.Դ. Արտասահմանեան Մարմիններու Արտակարգ Խորհրդաժողովի Որոշումներէն*, Վիեննա 1923, էջ 1: ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ Հ., *Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը*, Պէյրութ 1974, էջ 127: ОГАНЕСЯН Э., *Век Борьбы*, Ереван 2010, с. 261: *«Նոր Արշալոյս»*, 1 Յուլիսի 1923, թիւ 27:

2 ՋԱՄԱԼԵԱՆ, Ա., *Յ. Քաջազնունին եւ Դաշնակցութիւնը*, ի «Հայրենիք», Յունուար 1924, (Բ. տարի), N 3, էջ 48:

3 ՔԱՋԱԶՆՈՒՆԻ, Հ., *Յետ մահու պատմուածքներ, յուշեր, յօդուածներ, նամակներ*, Համազգային հրտ., Պէյրութ 1965, էջ 243-244:

4 Անդ, էջ 12-13:

5 Հայաստանի Ազգային արխիւ (այսուհետեւ՝ՀԱԱՅ)., Ֆ.1, ց. 4, գ. 19, թ. 159, բնագիր-ձեռագիր:

© National Library of Armenia

հարցազրոյց տալիս տեղի «Նոր Օր» հայկական թերթին։ Լրագրողի հարցին՝ արդեօք մասնաւոր պաշտօնո՞վ էք այցելում Հայաստան, Քաջազնունին պատասխանում է։ «Ո՛չ, Հայաստան կ'երթամ որովհետեւ իմ տունն է։ Գիտէք որ արտասահմանի բնակութեան պայմանները ժլատ են։ Այսպէս, օրինակի համար, երկու տարիէ ի վեր որ Ռումանիա էի, մեծ դժուարութիւններով կը կարողանայի բանի մը ամիս եւս մնալու արտօնութիւն ստանալ ոստիկանութենէն։ Արդէն վաղուց կը մտածէի տուն վերադառնալ, որովհետեւ մտադրութիւն չունէի արտասահմանին կապուելու։ Իբրեւ մասնագէտ-երկրաչափ կը խորհիմ երկրի վերաշինական ձեռնարկներուն իմ մասնակցութիւնը տանիլ»[6]։

Դեկտեմբերի վերջերին Յովհաննէս Քաջազնունին Աթէնքից հասնում է Բաթում, որտեղից անցնում է Թիֆլիս, իսկ 1925ի Յունուարի 19ին նա արդէն Երեւանում էր[7]։ *Իր՝ Հայաստան վերադառնալու կապակցութեամբ* «Խորհրդային Հայաստան» *թերթում հրապարակուած հարցազրոյցում Քաջազնունին ասում է։* «Իմ գալու նպատակը Խորհրդային Հայաստանում աշխատելն է։ Ես շատ ջերմ ցանկութիւն ունեմ աշխատելու Հայաստանի շինարարութեան մէջ իմ մասնագիտութեան ասպարէզում»[8]։ *Նոյն միտքը Քաջազնունին իր նամակներից մէկում յայտնել էր իր դստերը՝ Մարգարիտային։ Նա մասնաւորապէս գրում է։* «Մի տենչ ունեմ միայն. վերադառնալ Հայաստան եւ աշխատել հայ ժողովրդի համար, - ինչ աշխատանք էլ լինի՝ թէկուզ Երեւանի փողոցները սալայատակել ու արկղերը կանոնաւորել։ Այդ յոյսով էլ ապրում եմ»[9]։

Եւ իրապէս մեծ յոյսերով ու նպատակներով Քաջազնունին վերադարձաւ Երեւան ու պատանեկան խանդավառութեամբ գործի անցաւ՝ իր մասնագիտական գիտելիքներն ի սպաս դնելով նոր Հայաստանի կերտմանը։ Այդ տարիներին Հայաստանում ընթանում

6 «Նոր Օր», 12 Նոյեմբերի 1924, Բ. տարի, թիւ 346։ «Արեւ», 29 Նոյեմբեր 1924, Ժ. տարի, թիւ 1753։ «Արձագանք Փարիզի», 28 Դեկտեմբեր 1924, Թ. տարի, թիւ 34։

7 «Խորհրդային Հայաստան», 22 Յունուար 1925, թիւ 17։

8 Անդ։

9 Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան (այսուհետեւ՝ ԳԱԹ), Յ. Քաջազնունու ֆոնդ, թիւ N 4212, Գ. 161, թ. 2։

էին մեծ ծաւալի շինարարական աշխատանքներ, ճարտարապետների խիստ կարիք էր զգացւում։ Քաջազնունու բարձր արհեստավարժութիւնն ու խորը գիտելիքները մեծ դեր խաղացին երիտասարդ Հանրապետութեան կեանքում։ 1925ին Քաջազնունին ընտրւում է ՀՍՍՀ Պետպլանին կից Տեխնիկական խորհրդի անդամ եւ կարճաժամկէտ ծառայութիւնից յետոյ՝ Մարտի սկզբից, ստանձնում է Հայբամբակկոմիտէի շինարարական բաժանմունքի վարիչի պաշտօնը, որ զբաղեցնում է մինչեւ 1927ի Մարտ ամիսը[10]։ *Լինելով բարձրակարգ ճարտարապետ՝ նա յաճախ էր հրաւիրւում տարբեր յանձնաժողովների, տալիս նախագծերի եզրակացութիւններ։ 1926ին Քաջազնունին մասնակցում է կառուցուելիք ժողտան (օպերայի եւ բալետի շէնքի) յայտարարուած մրցոյթին (նախագիծը, ցաւօք, չի պահպանուել)։ 1927-29 Քաջազնունու նախագծերով եւ նրա անմիջական ղեկավարութեամբ՝ Երեւանում եւ Սարդարապատում կառուցուեցին բամբակամշակման գործարաններ (չեն պահպանուել), նոյն թուականներին Երեւանում կառուցում է ձէթօճառի գործարանը՝ իր բոլոր օժանդակ կառոյցներով եւ բնակելի աւանով՝ աշխատողների համար։ Դրանք Խորհրդային Հայաստանի առաջին արդիւնաբերական շինութիւններն էին, գործարանի մօտ բնակելի աւանի շինարարութիւնը Հայաստանում առաջին փորձերից էր եւ աշխատողների բնակեցման շրջաններն անմիջականօրէն աշխատավայրին մօտեցնելու նպատակ էր հետապնդում։ Այդ միտումը բնորոշ է 20ական թուականների հայկական ճարտարապետութեանը*[11]։

1926ի Գիւմրու սարսափելի երկրաշարժից յետոյ, Յովհաննէս Քաջազնունին մշտապէս գտնուել է այնտեղ, ուսումնասիրել քանդուած տների բնոյթը, առաջարկել շէնքերը ճիշտ կառուցելու

10 *Հայաստանի պատմութեան թանգարանի, Նորագոյն պատմութեան փաստաթղթերի ֆոնդ* (այսուհետեւ՝ ՀՊԹ-Ն. Պ. Փ. Ֆ) մմ.. 17543/3, բմ. 150, ռուսերէն, բնագիր-ձեռագիր; Ճարտարապետութեան ազգային-թանգարան ինստիտուտ (այսուհետեւ՝ ՃԱԹԻՖ-ՀԱՃ), Յ. Քաջազնունու ֆոնդ, գ. 52, թ. 4։

11 ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ, Լ., *Յովհաննէս Քաջազնունին՝ ճարտարապետ*, ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիա Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան 1997, էջ 14։

© National Library of Armenia

ուղիներ։ 1927ին հանդէս է եկել զեկուցմամբ՝ Լէնինականում իրականացուող վերականգնողական շինարարական աշխատանքների բնոյթի վերաբերեալ[12]*։ Յետագայում՝ 1935ին, Յովհաննէս Քաջազնունին Լէնինականում՝ նախկին Բուլվարնայայ (Կիրովի, այժմ՝ Ռիժկովի ճեմափողոց) եւ 27րդ փողոցների խաչմերուկում, կառուցում է բնակելի նոր շէնք։ Այս կառոյցը մինչեւ օրս կանգուն է եւ դիմակայել է անգամ 1988ի աւերիչ երկրաշարժին ու համարւում է Քաջազնունու լաւագոյն գործերից մէկը։ 1927ի Մարտից Քաջազնունին աշխատել է շինարարական նախագծերի հսկողութեան ոլորտում, սկզբում Տնտխորհրդին կից Շինարարա-Տեխնիկական կոմիտէում, ապա՝ Պետպլանին ԷԿՕՍՕ-ին կից Շինարարա-Տեխնիկական կոմիտէի նախագահի տեղակալ (մինչեւ 1931)։ 1932-37 եղել է ՀՍՍՀ Կոմունալ տնտեսութեան ժողկոմխարհատի խորհրդի գիտքարտուղարը*[13]*։ Միաժամանակ ժրաջան զբաղւում էր հասարակական գործունէութեամբ։ Հայաստանի Տեխնիկական ընկերութեան նախագահութեան անդամ էր, ապա նախագահ։ 1928ին Հ. Աճառեանի, Գ. Յակոբեանի, Ա. Տէրեանի համահեղինակութեամբ՝ Յովհաննէս Քաջազնունին իր տեխնիկական եւ գրական գիտելիքների մեծ պաշարով մասնակցում է* «Շինարարական կառոյցների ռուս-հայերէն բառարանի» *ստեղծմանը։ Այդ բառարանը բաղկացած էր 7560 բառ-յօդուածներից*[14]*։ 1929ի Նոյեմբերի 1ից* «Կորչի անգրագիտութիւնը» *ընկերութեան անդամ էր*[15]*։ 1926ի աշնանից մինչեւ 1931 գարունը Քաջազնունին դասաւանդում է Երեւանի պետական Համալսարանի նոր կազմակերպուած տեխնիկական ֆակուլտետում (շինարարական արուեստ), ապա Շինարարական ինստիտուտում (ճարտարապետական նախագծում)։ 1930ի փետրուարի 9ին ՀՍՍՀ Լուսժողկոմատի կոլեգիայի որոշմամբ Յովհաննէս Քաջազնունուն շնորհւում է պրոֆեսորի գիտական կոչում*[16]*։*

12 ՀԱԱՅ., ֆ. 112, ց. 4, գ. 654, թթ. 17-19:

13 ՃԱԹԻՖ-ՀԱՃ, Յ. Քաջազնունու ֆոնդ, գ. 53, թ. 3; ՀՊԹ-Ն.Պ.Փ.Ֆ. մմ. 17543/ 89, ռուսերէն, բնագիր-ձեռագիր:

14 *Ռուս-հայերէն բառարան շինարարական կառուցուածքների*, ԱՃԱՌԵԱՆ, Հ. – ԶԱՐԳԱՐԵԱՆ, Հ. – ՏՕՆՈՅԵԱՆ, Ա. – ՔԱՋԱԶՆՈՒՆԻ, Յ. – ՅԱԿՈԲԶԱՆԵԱՆ, Դ., ԵՊՀ հրտ., Երեւան 1928:

15 ՀՊԹ-Ն.Պ.Փ.Ֆ. ГИК. մմ. 17543/18, ռուսերէն, բնագիր-ձեռագիր:

16 Անդ, ГИК. մմ. 17543/ 153, ռուսերէն, բնագիր-ձեռագիր:

1930ին Քաջազնունին կառուցում է Ապարանի շրջխորհրդի երկյարկանի շէնքը, որի ծաւալի մէջ ընդգրկուած են նաեւ ճաշարան եւ հիւրանոցը, իսկ 1936ի Մարտի 8ին նա «Աշխատանքային պայմանագիր» (Трудовое соглашение) *է կնքում Լ. Բերիայի անուան Բարձրագոյն կոմունիստական գիւղատնտեսական դպրոցի տնօրէն Ս. Խաչատրեանի հետ, որով պարտաւորւում է վերանախագծել եւ շարունակել այդ շինութեան կենտրոնական մասի եւ աջ թեւի կառուցումը։ Այդ շէնքը Տէրեան փողոցի վրայ գտնուող Պոլիտեխնիկական ինստիտուտի այժմեան ռեկտորատն է, որի նախագծային եւ շինարարական աշխատանքները սկսել են Ա. Թամանեանի յանձնարարութեամբ։ Ըստ Ճարտարապետ Լ. Դոլուխանեանի՝ այդ շէնքի վերաբերեալ, բացի յիշեալ* «Աշխատանքային պայմանագրից», *որեւէ փաստաթուղթ չի պահպանուել, եւ հեղինակի հարցը մտորումների տեղիք է տալիս*[17]*։ Հասցրե՞լ է, արդեօք, Քաջազնունին իրականացնել այդ պայմանագիրը, մնացել է անյայտ։*

Միաժամանակ պէտք է նշել, որ Յովհ. Քաջազնունու կեանքը Խորհրդային Հայաստանում այնքան էլ հեշտ չի անցել։ Հայրենիքում նա մշտապէս գտնուել է ՆԿՎԴ-ի գործակալների մշտական հսկողութեան տակ, ենթարկուել զանազան ճնշումների, հասարակութեան կողմից յաճախ մեղադրուել իր չէզոքութեան համար՝ պիտակաւորուելով որպէս «ծպտուած յեղափոխական եւ սաբոտաժնիկ»*։ 1925 Յունիսի 6ին Հայաստանի արհեստակցական միութիւնների խորհրդի նախագահ՝ Պ. Կուզնեցովը եւ ընդհանուր բաժնի վարիչ՝ Դաղայեանը, Հայկոմկուսի կենտկոմին եւ Արտակարգ յանձնաժողովին գրում են.* «Վերջին ժամանակներս նկատւում է, որ նախկին դաշնակցական Հայաստանի վարչապետ Քաջազնունու Հայրամբակոմում պաշտօնի անցնելուց յետոյ նրա շուրջ համախմբւում են դաշնակներ եւ հակայեղափոխական անցեալ ունեցող անձինք, օրինակ, երկաթուղու դաշնակցականների նախկին արտակարգ եռեակի նախագահ Քոչարեանը, երկաթուղու շէնքի նախկին հսկիչ Գնունին, Հայրենիքի փրկութեան կոմիտէի անդամ, որն ուղարկուած է Սարդարաբադ տասնեակի պաշտօնով եւ ուրիշները։ Յայտնելով վերոյիշեալի մասին, խընդրում ենք ձեռք առնել միջոցներ վերջ տալու այդ երեւոյթին»*[18]*։*

17 ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ, Լ., *նշ. աշխ.*, էջ 15:

18 *Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Խորհրդային իշխանութիւնը (Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու)*, Պատ. խմբ. եւ կազմող՝ պրոֆ. Վ. Ն. Ղազախեցեան, Երեւան 1999, էջ 210:

© National Library of Armenia

Այս գրութեանը ի պատասխան՝ Հայարտյանճնաժողովի (Զեկա) նախագահ Մելիք-Յովսէփեանը (Օսիպովը) ՀԿԿ կենտկոմի քարտուղար Բակունցին պատասխանում է, որ ՀԱՄԽ-ի թիւ 97 գրութեան առթիւ, առայժմս ոչ մի քայլ արուած չէ եւ որ իրենք դեռ գաղտնի կերպով ուսումնասիրում են Քաջազնունու եւ նրան շրջապատողների գործունէութիւնն ու աշխատանքը, որից յետոյ մանրամասն կը զեկուցեն[19]*։ 1931ին Յովհաննէս Քաջազնունին Խորհրդային Հայաստանի տասնամեակին նուիրուած մի յօդուած է պատրաստում տպագրել, որն այդպէս էլ չի տպագրւում, սակայն մեծ աղմուկ է բարձրացնում ուսանողութեան շրջանում։ Ուսանողները Հայաստանի ինժեներ-տեխնիկների եւ գիւղատնտեսական մասնագէտների համագումարում, ծանօթանալով յօդուածի բովանդակութեանը օտար գաղափարախօսութիւն են տեսնում այնտեղ եւ պարսաւանքի բանաձեւ ընդունում։ Այդ համագումարում ելոյթ է ունենում ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջեանը, որ, անդրադառնալով Յովհաննէս Քաջազնունուն, մասնաւորապէս ասում է.* «...Քաղաքացի Քաջազնունին, չնայած իր ծերունի հասակին, երիտասարդի պէս ոգեւորւում է մեր շինարարութեամբ, մեր կուլտուրական վերելքով։ Սակայն նա եւ նրա նմանները չեն ուզում կամ չեն կարողանում հաշտուել այդ շինարարութեան սոցիալիստական իմաստի ու բովանդակութեան հետ, շարունակելով զարդարուած մնալ սոսկ լոյալութեան փետուրներով»[20]։ *Աւելի վաղ* «Խորհրդային Հայաստան» *թերթում Ա. Խանջեանն անդրադարձել էր Քաջազնունու՝ Խորհրդային Հայաստանի տասնամեակին նուիրուած, բայց այդպէս էլ չտպագրուած յօդուածին։ Նա գրում էր.* «...Կան միամիտներ կամ «միամիտ» ձեւացնողներ, որոնք այս կամ այն չափով կասկածում են Դաշնակցութեան դերի մասին՝ ինտերվենցիայի կազմակերպման ասպարէզում։ Նախկին դաշնակցական ղեկավար քաղաքացի Քաջազնունին Խորհրդային Հայաստանի 10-ամեակին նուիրուած իր մի անտիպ յօդուածում գրում է.* «Երբ մտածում եմ, թէ Միութեան վրայ գրոհ տուող այլազան ուժերի շարքերից մէկում կարող է գտնուել նաեւ մի հայ մարդ, որն իրեն հայրենասէր է անուանում, սիրտս լցւում է անհուն ցաւով ու զայրոյթով»։ Քաղաքացի Քաջազնունին կասկածում է, որ ինտերվենցիոնիստների շարքերում «կարող է գտնուել նաեւ մի հայ մարդ»։ Կարիք կա՞յ ասելու, որ երկմտել այն փաստի վերաբերմամբ, թէ Դաշնակցութիւնն ինտերվենցիան պատրաստողների առաջին շարքերում է, նշանակում է կամայ թէ ակամայ կատարել Դաշնակցութեան՝ հակախորհրդային ինտերվենցիայի կազմակերպման այդ ջերմ գործակցի դաւերն ու ոտնձգութիւնները...»[21]։ *Իսկ Ա. Բզնունին նոյն թերթում անդրադառնալով Յովհաննէս Քաջազնունու քաղաքական իդէալներին եւ հայրենասիրական «միամտութեանը», գրում է.* «Շինարարական ինստիտուտի կոմբջիջի դռնքաց նիստում ունեցած իր երկու ելոյթների մէջ քաղաքացի Քաջազնունին ճիգ էր թափում վիճարկել ընկ. Ա. Խանջեանի[22] այն մասին, որ Քաջազնունու դիրքերը երկդիմի են, որ նա կոծկում է Դաշնակցութեան, որպէս հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստման գործակցի դերը»[23]։ *1931ի աշնանը Յովհաննէս Քաջազնունին, չդիմանալով այդ աննախադէպ քննադատութեան ու ճնշմանը, դուրս է գալիս Շինարարական ինստիտուտից եւ այլեւս գիտա-կրթական գործունէութեամբ չի զբաղւում։ Ըստ վկայութիւնների՝ նա հանդիպել է ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ՝ Սահակ Տէր Գաբրիէլեանին եւ բողոքել, որ իրեն մեղադրում են որպէս հակայեղափոխական,* «ծպտուած Դաշնակցական», *սաբոտաժնիկ, թէ Զեկան անգամ ստիպում է դաշնակցութեան վարկաբերեալ յօդուածներ գրել մամուլում, սակայն ինքը մերժում է՝ պատճառաբանելով, որ Դաշնակցութեան մասին իր ասելիքն արդէն յայտնել է արտասահմանում, այժմ եթէ իր ներկայութիւնը անբաղձալի է եւ վնասակար Հայրենիքին, կա՛մ թոյլ տալ վերադառնալ արտասահման, կա՛մ աքսորել Սիբիր։ Ի հարկէ, Սահակ Տէր-Գաբրիէլեանը չէր կարող թոյլ տալ Քաջազնունուն՝ արտասահման վերադառնալու, բայց խոստանում է, որ նման ելոյթներ այլեւս չեն լինի նրա հանդէպ*[24]*։ Բնականաբար, Քաջազնունին, ներքուստ վերախմաստաւորելով իր վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ, ընդունում է, որ սխալուել է, եւ այդ մասին խոս-*

19 Անդ, էջ 211:

20 *Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Խորհրդային իշխանութիւնը (Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու)*, ի «Խորհրդային Հայաստան», 29 սեպտեմբերի, 1931 էջ 258:

21 Անդ, էջ 255-256:

22 ԽԱՆՋԵԱՆ, Ա., *Աւելի զգաստ, աւելի աչալուրջ*, ի «Խորհրդային Հայաստան», 4 Մայիսի 1931 (102):

23 «Խորհրդային Հայաստան», 23 Մայիսի 1931:

24 ԳԷՈՐԳԵԱՆ Կ., *Ամէնուն տարեգիրքը, Ժ. տարի*, Պէյրութ 1963, էջ 235-236:

© National Library of Armenia

տովանում է իր դստերը՝ Մարգարիտային։ 1950ին Մարգոյ Քաջազնունին պատմաբան Դ. Մուրադեանի հօր՝ Արմէնակ Մուրադեանի հետ ունեցած իր անկեղծ զրոյցում վկայել է. «Երբ 1936 թուին՝ Աղասի Խանջեանի սպանութիւնից յետոյ, սկսուեցին զանգուածային բանտարկութիւնները, հայրս խիստ շփոթուել էր եւ տխուր էր։ Նա հաւատացած էր, որ իրեն եւս կը բանտարկեն։ Մտերիմ ընկերներն ասում էին, որ չպէտք էր գար Հայաստան, բայց հայրս պատասխանում էր՝ պէտք է գայի, բայց այդ գիրքը չպէտք է գրէի։ Նա ասում էր՝ ես խիստ զղջում եմ։ Խօսակցութեան վերջում Մարգոյ Քաջազնունին աւելացրեց. «Հայրս շատ էր ափսոսում, որ գրել է այդ գիրքը»[25]։

Վերը յիշատակուած Քաջազնունու մեղադրական գործի եզրակացութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ 1931ին Յովհաննէս Քաջազնունու եւ մի խումբ մարդկանց նկատմամբ յարուցուել է քրէական գործ՝ ՀՍՍՀ քրէական օրէնսգրքի 154րդ յօդուածի համաձայն։ Նրանք մեղադրուել են անտնտեսվարութեան մէջ։ Բանն այն էր, որ Երեւանի ձէթ-օճառի գործարանին կից գտնուող եւ Քաջազնունու նստավայր Հայբամբակկոմի շէնքը, ճաք էր տուել ու ձեւախախտուել։ Պատճառը պարզելու համար ստեղծուել է յանձնաժողով ու փորձ է արուել մեղքը գցել Քաջազնունու եւ եւս երկու աշխատակիցների՝ Մելիք-Հայկազեան Մուշեղի եւ Մելիք-Աղամիրեան Հմայեակի վրայ՝ իբրեւ խորհրդային իշխանութեան դէմ ուղղուած վնասարարական գործողութիւն։ Խնդրի քննարկման ընթացքում Քաջազնունին բացատրութիւն է տուել, որ շէնքի ձեւախախտման պատճառը կարող է լինել ընդերքը, որ հաւանաբար երկրաբանական հետազօտման չի ենթարկուել։ Երկար քննարկումներից յետոյ Հայպէտքաղվարչութեան տնտեսական գծով լիազօր Ա. Անանովը քննութեամբ պարզում է, որ դրանում յանցակազմ չկայ, եւ 1931 Փետրուարի 26ի որոշումով այդ գործը կարճւում է գործողութիւններում յանցագործութեան բացակայութեան պատճառով[26]։

25 ՄՈՒՐԱԴԵԱՆ, Դ., *Յովհաննէս Քաջազնունու ողբերգութիւնը. Յիշողութիւններ եւ խոհեր*, «Երկիր», Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի պաշտօնաթերթ, 2006, 3 Մարտի №8 (1878), էջ 11։

26 ՀԱԱՅ., ֆ. 571, 5 c, գ. 251, թ. 17, պատճէն-մեքենագիր, ռուսերէն։ ՅԱԿՈԲԵԱՆ, Ա., *Յովհաննէս Քաջազնունու մեծ ողբերգութիւնը*, «ՎԷՄ», 2016, Ը. (ԺԴ.) տարի, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, թիւ 4(56), էջ 196։

1930ական թուականներին ողջ ԽՍՀՄ-ում մոլեգնում էր անհատի պաշտամունքը, որին զոհ գնացին բազում անմեղ մարդիկ։ Յատկապէս 1937ին այն աւելի մեծ չափերի հասաւ։ Խորհրդային ՆԳԺԿ-ն չէր կարող աննկատ թողնել եւ Յովհաննէս Քաջազնունուն։ 1937ի Յուլիսի վերջերին նա հանգստանում էր Ստեփանաւանում եւ իր աղջկան՝ Մարգարիտային ուղղուած նամակում յիշատակում է, որ մտադիր է մնալ այնտեղ մինչեւ Օգոստոսի 6ը[27]։ Յաւօք, դա նրան վիճակուած չէր, քանի որ Յուլիսի 28ին ՆԳԺողկոմիսար Խ. Մուղդուսու ստորագրութեամբ տրւում է Յովհաննէս Քաջազնունու բնակարանը խուզարկելու եւ ձերբակա-լելու հրահանգ (օրդեր թիւ 6/41)։ Յուլիսի 29ին ՀՍՍՀ ՆԳԺԿ-ն ձերբակալում է նրան Ստեփանաւանում[28]։ Հետաքրքրական է, որ Յովհաննէս Քաջազնունու ձերբակալելու եւ մեղադրանք ներկայացնելու հիմք, բացի որոշ օպերատիւ տուեալներից, եղել է նրա որդու՝ Կարէն Քաջազնունու ցուցմունքը-մատնագիրը, որում նա յայտնում է, որ իր հայրը՝ Յովհաննէս Քաջազնունին, համոզուած դաշնակցական է, «կատարեալ բուրժուա», «խորհրդային կառավարութեան թշնամի»։ Ի հարկէ, դժուար չէ կռահել, թէ այդ սարսափելի տարիներին ինչպէս էին ցուցմունքները կորզւում, ու Կարէն Քաջազնունու ցուցմունքը հօր դէմ բացառութիւն չէր։ Այսօր արդէն թէեւ դժուար է ասել՝ այդ խօսքերը հարազատ որդին կամովի՞ն է ասել, թէ՞ նրան ստիպել են, բայց Կարէնի գրած մատնագիրը խօսուն վկան է Խորհրդային երկրում տիրող բարքերի։

Ժամանակակիցները, ովքեր եղել են չեկայի նկուղներում ու տեսել Յովհաննէս Քաջազնունուն, իսկ յետագայում հրաշքով կարողացել են դուրս գալ Խորհրդային կայսրութեան սահմաններից, պատմել են, որ նա բանտարկուած է եղել թիւ 17 խցում ու մեղադրուել «լրտեսութեան» մէջ, իբր «գողացել եւ օտար պետութեան է տրամադրել ինչ-որ գծագրեր»։ Որպէսզի ստիպեն նրան

27 ԳԱԹ, Յ. Քաջազնունու փոնդ, N 4212, Գ. 163, թ. 2, «Ասպնջակ», Երեւան, 26 Յունիսի, 1991, թիւ 6: ԻՇԽԱՆԵԱՆ, Վ., *Քաջազնունիներ. Հարցազրոյց Հայաստանի հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յովհաննէս Քաջազնունու դուստր Մարգարիտ Քաջազնունու հետ*, ի «Գարուն», 1990թ, № 10, էջ 40:

28 ՀԱԱՅ., ֆ. 571, 5 c, գ. 251, թ. 13, պատճէն-մեքենագիր, ռուսերէն։ ՅԱԿՈԲԵԱՆ, Ա., անդ:

© National Library of Armenia

խոստովանել իր արարքը, ենթարկել են զանազան կտտանքների եւ կուրացրել 3500 մոմանոց էլեկտրական լամպերի միջոցով[29]*։ Ըստ Քաջազնունու մեղադրական գործի՝ միակ հարցաքննությունը կատարուել է 1937 Նոյեմբերի 16ին։ Հարցաքննութեան ժամանակ Քաջազնունին չի հերքել, որ ինքը մինչեւ Խորհրդային կարգերի հաստատումը վարել է ակտիւ դաշնակցական գործունէութիւն, բայց միաժամանակ նշել, որ Խորհրդային Հայաստան վերադառնալուց յետոյ հակապետական գործունէութեամբ չի զբաղուել։ Այնուհանդերձ Յովհ. Քաջազնունուն,* «փետրուարեան աւանտիւրային» *մասնակցելու եւ հակասովետական գործունէութեամբ զբաղուելու մէջ մեղադրելուց բացի՝ վերագրեցին նաեւ այն «մեղքը», որ նա Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման դէմ է, միաժամանակ դէմ է Հայաստանում խորհրդային կարգերի վարած սոցիալ-տնտեսական քաղաքականութեանը։*

Յովհաննէս Քաջազնունու մեղադրական գործը 2016ին յայտնաբերել է յայտնի պատմաբան Արարատ Յակոբեանը եւ տպագրել «Վէմ» *ամսագրի 2016ի եւ 2017ի համարներում։ Իր յօդուածներում ուսումնասիրելով ողջ դիւանային գործը՝ պատմաբան Ա. Յակոբեանը գրում է։* «Յ. Քաջազնունու հետաքննութեան քր. գործը մեղադրական եզրակացութեամբ 1937ի նոյեմբերին (ամսաթիւը չի երեւում) ՀԽՍՀ ՆԳԺԿ կոնդակովի հաստատմամբ ուղարկուել է ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռեակի քննութեան։ Եռեակը 1937 Դեկտեմբերի 5ին մեղադրեալ Յ. Քաջազնունու հանդէպ կայացրել է գնդակահարութեան դատավճիռ՝ անձնական գոյքի բռնագրաւմամբ։ Սակայն առողջական խնդիրների պատճառով նա պառկած է եղել Երեւանի բանտային հիւանդանոցում։ Ընդունուած կարգի համաձայն՝ մահապատիժը կարող էր ի կատար ածուել միայն բանտային (դատական) բժշկի

29 ԱԻՕ, *Յեղափոխական Ալպոմ, ազատագրական պայքարի յուշամատեան, Յ. Քաջազնունի. Հայաստանի անդրանիկ վարչապետը*, Պէյրութ 1965, Զ., թիւ 3 (63), էջ 86-87: ԻՇԽԱՆԵԱՆ, Վ., *Քաջազնունիներ. Հարցազրոյց Հայաստանի հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յովհաննէս Քաջազնունու դուստր՝ Մարգարիտ Քաջազնունու հետ*, «Գարուն», Երեւան 1990թ, №, 10, էջ 42: ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ա. Ա., *Հ. Յ. Դաշնակցութեան մեծ դատավարութեան թղթածրարները, Յովհաննէս Քաջազնունու դատական գործը*, ի «Վէմ», 2010, Բ. (Ը.) տարի, Հոկտեմբեր-դեկտեմբեր, թիւ 4(32), էջ 189:

եզրակացութեան հիման վրայ։ Մինչդեռ դատապարտեալ Յ. Քաջազնունին գտնուել է ֆիզիկական ու առողջական այնպիսի ծանր վիճակում, որ բանտային բժիշկը չի տուել գնդակահարութիւնը իրականացնելու թոյլտուութիւն կամ առնուազն՝ ժամանակաւորապէս յետաձգել է ակտի իրականացումը, մինչեւ որ կալանաւորը կարողանայ ինքնուրոյնաբար ոտքի վրայ կանգնած մնալ։ Սակայն նախկին վարչապետի առողջական վիճակի յետագայ սրացումը (պաշտօնական վարկածով՝ ծերունական թուլութիւն, տուբերկուլեօզ եւ գրիպ) յանգեցնում է նրան, որ նա մահանում է բանտային հիւանդանոցում 1938ի Յունուարի 15ին, 70 տարեկան հասակում»[30]*։ Վերջին տարիներին պատմաբանների շրջանում հիմք ընդունելով բանտային հիւանդանոցի բժշկի կազմած ակտը՝ արմատացել էր այն կարծիքը, որ Քաջազնունին մահացել է 1937 Դեկտեմբերի 22ին, սակայն պատմաբան Ա. Յակոբեանի կողմից յայտնաբերած փաստաթղթերում՝ յստակ երեւում է, որ քրէական գործում տեղ է գտել մի անճշտութիւն. ժամանակին ճիշտ չի ընթերցուել Քաջազնունու մահուան կապակցութեամբ բանտային հիւանդանոցի բժշկի կազմած ակտը, որում յստակօրէն արձանագրուած է, որ թոքախտով եւ հարբուխով հիւանդ կալանաւոր Քաջազնունին մահացել է 1938ի Յունուարի 15ին։ Սակայն նրա մահուանից յետոյ կազմուած փաստաթղթերում ընդհուպ մինչեւ 1992ի արդարացումը, Յովհաննէս Քաջազնունու մահուան թուականը սխալմամբ նշուած է 1937 Դեկտեմբերի 22ը, մինչդեռ բժշկական ակտում դեկտեմբերի 22ը նշուած է որպէս նրա հիւանդանալու օր։ Հէնց այս թիւրիմացութիւնը հարթելու համար է արժէքաւոր՝ գործում առկայ այն ձեռագիր (ընագիր) գրութիւնը, որ Քաջազնունու մահուան օրը՝ 1938 Յունուարի 15ին գրել է Երեւանի քաղաքային բանտի պետ, լեյտենանտ Միքայէլեանը՝ հասցէագրուած ՀԽՍՀ ՆԳԺԿ առընթեր Պետանվտանգութեան վարչութեան 8րդ բաժնի պետ Գրիգորեանին։ Դրանում, հիմք ընդունելով բանտի հիւանդանոցի ակտը, յայտնւում է, որ Յունուարի 15ին, բանտի 70 տարեկան հասակում թոքախտից եւ հարբուխից մահացել է քաղաքական կալանաւոր Յովհաննէս Քաջազնունին*[31]*։ Յիշատակելով ժամանակակիցների վկայութիւնները՝ Ս. Վրացեանը գրում է։* «Յ. Քաջազնունին բանտում

30 ՅԱԿՈԲԵԱՆ, Ա., *Յովհաննէս Քաջազնունու մեծ ողբերգութիւնը*, ի «Վէմ», 2017, Թ. (ԺԷ.) տարի, Յունուար-Մարտ, թիւ 1(57), էջ 232:

31 Անդ, էջ 230-231: ՀԱԱՅ ֆ.1191, ց. 16, գ. 2084, թ. 7:

© National Library of Armenia

իրեն պահել է բաջասիրտ եւ գաղափարական մարդու վայել ազնուականութեամբ: Հակառակ կրած ծանր զրկանքների, միշտ մնացել է լաւատես Հայաստանի եւ հայ ժողովրդի ապագայի մասին եւ օրինակ է ծառայել վիատուողների եւ ընկճուածների համար, մանաւանդ բանտարկուած երիտասարդութեան աչքին»[32]: *Հարկ է նշել, որ Եռեակը Յ. Քաջազնունուն գնդակահարութեան է դատապարտել առանց ՀԽՍՀ քրէական օրէնսգրքի որեւէ յօդուածով նրա հանդէպ մեղադրանքը որակելու, էլ չենք խօսում ապացուցելու մասին: Ընդորում, առաջադրուած մեղադրանքներում Քաջազնունին իրեն մեղաւոր չի ճանաչել: Ինչպէս նշում է պատմաբան Ա. Յակոբեանը, հազարաւոր այլ բռնադատուածների հարազատների նման իր հօրը արդարացնելու նպատակով Մարգոյ Քաջազնունին 1955 թուականի Յունիսի 22ին ընդարձակ, հիմնաւորումներով լի դիմումհայց է ուղղել Հայկ. ՍՍՌ ՊԱԿ-ի նախագահ Գ. Բագամեանցին: Դրանց հիման վրայ Քաջազնունու քրէական գործը յանձնուել է ՊԱԿ-ի համապատասխան բաժնին՝ լրացուցիչ ստուգման ենթարկելու համար: Քաջազնունու արդարացման գործին օգնելու, նրա մարդկային ու բարոյական անբիծ կերպարը ցոյց տալու համար բերուած են Գր. Զուբարեանի, Միք. Մազմանեանի, Գր. Տէր-Յակոբեանի (Գրոյի), Ս. Մարտիկեանի եւ այլոց վկայութիւնները: Դրան հակառակ՝ կարծես արդարացման գործը կասեցնելու համար, ՊԱԿ-ի քննչական մարմինները՝ յանձին հետաքննչական բաժնի պետի տեղակալ Փիրուզեանի, մէջբերել են 1955ի յեղափոխական գործունէութիւնը մերկացնող 6 էջանոց դիւանային տուեալներ, պատճէնների քաղուածքներ, որպէսզի հիմնաւորուի Քաջազնունու արդարացման անհնարինութիւնը: Այդ ամէնի հիման վրայ ՊԱԿ-ը 1956ի Փետրուարի 28ին տալիս է բացասական «Եզրակացութիւն»: Դա դեռ բաւական չէ, ՊԱԿ-ից գրութիւն է ուղարկուել Հայկ. ՍՍՌ Գլաւլիտի տնօրէն Թադեւոսեանին՝ հարցնելու, թէ Քաջազնունու յայտնի գիրքը հանուա՞ծ է արդեօք շրջանառութիւնից: Տնօրէնը պատասխանել է, որ այն պահւում է յատուկ ֆոնդում եւ միաժամանակ գրքի բովանդակութեան վերաբերեալ արտայայտուել է բացասական երանգաւորումներով:*

Խորհրդային բռնութեան մեքենան համարձակութիւն չունեցաւ անգամ խրուշչովեան «ձնհալի» փուլում յետմահու արդարացնել բռնադատուած անմեղ գործչին եւ մեծ քաղաքացուն: Արդիւնք չտուեցին նրա դստեր՝ Մարգարիտայի դիմումները, Քաջազնունուն ճանաչող մարդկանց միջնորդագրերը: Արդարացման հարցը յետաձգուեց, եւ ի վերջոյ խնդիրը լուծուեց միայն ԽՍՀՄ փլուզումից եւ Հայաստանի անկախութեան հռչակումից յետոյ: Անկախ Հայաստանի դատախազութիւնը, ուսումնասիրելով Քաջազնունու քրէական գործը, եզրակացրել է, որ նրան վերագրուած մեղադրանքները յանցագործութեան յատկանիշներ չեն պարունակել, գործի ուսումնասիրութեամբ պարզուել է, որ Քաջազնունին եղել է հայրենասէր, իր գործունէութեան ընթացքում պայքարել է բռնակալութեան դէմ՝ հայ ժողովրդի իղձերն իրականացնելու համար: Արդարացման որոշումը՝ 1992 Դեկտեմբերի 12ի հաստատմամբ, կայացրեց ՀՀ գլխաւոր դատախազ Արտաւազդ Գէորգեանը. «Որոշեցի՝ Յովհաննէս Քաջազնունու նկատմամբ քր. գործը կարճել յանցակազմի բացակայութեան պատճառով, նրան համարել արդարացուած եւ ռէաբիլիտացուած»[33]:

Մինչեւ 1990ականները եւ՛ Մարգարիտային եւ՛ հանրութեանը անյայտ էր, թէ որտեղ է ամփոփուած Յովհաննէս Քաջազնունու աճիւնը: Մեծ հայի մարմինը ամփոփուած է եղել ներկայիս ժամացոյցի գործարանի տարածքում եղած «Կոզեռն» կոչուող գերեզմանատանը, որ, սակայն ժամացոյցի գործարան եւ դպրոց կառուցելու նպատակով հողին է հաւասարեցուում եւ այսպէս Քաջազնունու եւ միւս երեւելի մարդկանց աճիւնները անհետ կորչում են:

Հօր յիշատակը վառ պահելու նպատակով Մարգարիտայ Քաջազնունին յետագայում Թոխմախեան լճի գերեզմանատանը Յովհաննէս Քաջազնունու անունով յուշաքար է կանգնեցնում:

Անուրանալի է Յովհաննէս Քաջազնունու ծառայութիւնները Հայաստանի առաջին հանրապետութեան կերտման գործում, նա իր ողջ գիտակից կեանքը, կարողութիւններն եւ գիտելիքները նուիրեց իր հայրենիքի բարօրութեանը:

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

32 ՔԱՋԱԶՆՈՒՆԻ, Յ., *Յետ Մահու*, նշ. աշխ., էջ 14:

33 ՅԱԿՈԲԵԱՆ, Ա., նշ. աշխ., էջ 233-234:

© National Library of Armenia

Summary

HOVHANNES KAJAZNUNI IN SOVIET ARMENIA

HAYK MARTIROSYAN

The well-known national-political and party statesman Hovhannes Kajaznuni was one of the few Armenian politicians living in exile who could not withstand homesickness, and, ignoring all sorts of dangers, nevertheless returned to Soviet Armenia. In the historiography of Kajaznuni there is a lot of ambiguous information about the years in Soviet Armenia: few people know about the fate of the great Armenian after returning to the homeland. In Soviet Armenia, he worked as a highly qualified architect, received the title of professor, read lectures at the Technical Faculty of Yerevan University, and then at the Engineering Construction Institute. At the same time, he experienced deep disappointment in his life, in the face of the negative phenomena of the "personality cult" period. At the end of July of 1937, O. Kajaznuni was arrested, and on December 5 the k (USSR) ICRC Troika sentenced O. Kajaznuni as an active participant in the Dashnaktsutyun to death with the confiscation of his personal property. However, his execution was postponed on the basis of a diagnosis of tuberculosis, delivered by the prison doctor. Shortly thereafter, on January 15, 1938, at the age of 70, the first Prime Minister of the Republic of Armenia, Hovhannes Kajaznuni, died in the prison hospital.

ԱՅՐԱՐԱՏԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՉՈՒՏԵԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Զաքարեան Հայաստանի տիրակալ, շահնչահ Զաքարէ Բ. Զաքարեանը՝ 1205/6 թուականին կառավարման ընդարձակ բարենորոգում է իրականացրել Հայաստանի ազատագրուած տարածքում եւ հիմնել է կուսակալութիւններ[1]*։ Նա դրանցից մէկը՝ Այրարատի կուսակալութիւնը յանձնել է իր վստահելի զօրավարներից Վաչէ Ա. Վաչուտեանին՝ շնորհելով նրան իշխանաց իշխան բարձրագոյն կոչում*[2]*։*

Կուսակալ նշանակուած Վաչէ Ա. Վաչուտեանին՝ Զաքարէ Բ.ն բացի պետական պաշտօնին համապատասխան տարածքից, սեփականութեան իրաւունքով յանձնել է նոյն կուսակալութեան մէջ մտնող Արագածոտն, Շիրակ, Նիգ գաւառները, Անբերդ գաւառակը[3]*, այդ թւում ռազմավարական խիստ կարեւոր նշանակութիւն ունեցող Անբերդ բերդաքաղաքը։*

ԱՅՐԱՐԱՏԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Այրարատի կուսակալութեան տարածքը թէեւ ստացել է պատմական Այրարատի նահանգի անունը, քանի որ ստեղծուել է

---

1 ՊԵՏՐՈՍԵԱՆՑ Տ., *Կուսակալութիւն-փոխարքայութիւնների հիմնումը Զաքարեան Հայաստանում*, ի *«Մխիթար Գօշ»*, 2017, թիւ 2, էջ 286-292:

2 PETROSYANTS, T., *The transference of the Ayrarat governorship-vicegerency to Vache I Vachutyan*, ի *Բազմավէպ*, 2016, թիւ 3-4, էջ 273-279:

3 ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ, *Պատմութիւն։ Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից*, ՎԻՐԱԲԵԱՆ, Ա., (աշխտ.), Երեւան 2015, էջ 183:

© National Library of Armenia